ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թվականի N 247 Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ՏՐՎԱԾ 26-Ը ՄԱՅԻՍԻ 2023Թ. ԹԻՎ 135Ա ՈՐՈՇՄԱՆ 2-ՐԴ ՄԱՍՈՎ ՏՐՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015թ. մարտի 19-ի N 596-Ն որոշման 124-րդ կետի պահանջներով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ

1.Հիմք ընդունելով «Արման ՇԻՆ» ՍՊԸ-ի տնօրենի գրությունը՝ համայնքի ղեկավարի 26.05.2023թ. թիվ 135Ա որոշման 2-րդ մասով տրված շինարարության թույլտվության սահմանված շինարարության ժամկետը երկարաձգել երեք ամիս ժամկետով (շինարարության թույլտվություններ՝ 26.05.2023թ.-ի թիվ 10-12):

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

2023 թ. նոյեմբերի 6
հ.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

06 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թվականի N 248 Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ համայնք Եղեգիս, գյուղ Հերմոն, Սիրանեսի փողոց թիվ 38 հասցեում գտնվող քաղաքացի Սպարտակ Արամի Մխիթարյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասում (կադաստրային ծածկագիր՝ 10-029-0031-0002, մակերեսը՝ 0,2357հա) կառուցված ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, նկատի ունենալով, որ ինքնակամ կառույցը կառուցված չէ Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման ու անվտանգության գոտիներում և քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև ելնելով այն հանգամանքից, որ ինքնակամ կառույցի և դրանով զբաղեցված ու սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ հողամասի սեփականության իրավունքով տրամադրումը չի հակասում սահմանված կարգով հաստատված գլխավոր հատակագծերի, քաղաքաշինական գոտիավորման նախագծերի, հողերի օգտագործման սխեմաների և քաղաքաշինական ծրագրերի պահանջներին, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ.-ի թիվ 912-Ն որոշման 2-րդ գլխի 18-րդ կետի բ) ենթակետի դրույթները

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Եղեգիս համայնքի գյուղ Հերմոն, Սիրանեսի փողոց թիվ 38 հասցեում գտնվող քաղաքացի Սպարտակ Արամի Մխիթարյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասում ինքնակամ կառուցված 40,85 ք/մ մակերեսով հասարակական նշանակության խանութը ճանաչել օրինական և շինության նկատմամբ սեփականատիրոջ սեփականության իրավունքը (կցվում է շինության հատակագիծը):

2.Ինքնակամ կառույցները օրենքով սահմանված կարգով հաշվառված է ՀՀ կադաստրի կոմիտեի էլեկտրոնային բազայում: Չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիրն է՝ 2023QEUL9U:

3.Օրինականացման համար սահմանված վճարը շինությունների համար 1 քմ-ը կազմում է 1262 ՀՀ դրամ, ընդհանուր գումարը 51 552.7 ՀՀ դրամ, որը պետք է մուծվի 900 355 113 060 հաշվեհամարին:

4.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարի՝ 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

2023 թ. նոյեմբերի 6
հ.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

06 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թվականի N 249 Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ համայնք Եղեգիս, գյուղ Շատին, 28-րդ փողոց թիվ 11 հասցեում գտնվող քաղաքացի Գագիկ Շիրակի Արամյանին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում (կադաստրային ծածկագիր՝ 10-035-0254-0024, մակերեսը՝ 0,11031հա) ինքնակամ կառուցված բնակելի տան պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, նկատի ունենալով, որ ինքնակամ կառույցը կառուցված չէ Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման ու անվտանգության գոտիներում և քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև ելնելով այն հանգամանքից, որ ինքնակամ կառույցի և դրանով զբաղեցված ու սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ հողամասի սեփականության իրավունքով տրամադրումը չի հակասում սահմանված կարգով հաստատված գլխավոր հատակագծերի, քաղաքաշինական գոտիավորման նախագծերի, հողերի օգտագործման սխեմաների և քաղաքաշինական ծրագրերի պահանջներին, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ.-ի թիվ 912-Ն որոշման 2-րդ գլխի 13-րդ կետի ա) ենթակետի և 18-րդ կետի ա) ենթակետի դրույթները

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Եղեգիս համայնքի գյուղ Շատին, 28-րդ փողոց թիվ 11 հասցեում գտնվող քաղաքացի Գագիկ Շիրակի Արամյանին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում (կադաստրային ծածկագիր՝10-035-0254-0024, մակերեսը՝ 0,11031հա) ինքնակամ կառուցված կառուցված 174.5 ք/մ մակերեսով բնակելի տունը ճանաչել օրինական և շինության նկատմամբ սեփականատիրոջ սեփականության իրավունքը (կցվում է շինության հատակագիծը):

2.Ինքնակամ կառույցները օրենքով սահմանված կարգով հաշվառված է ՀՀ կադաստրի կոմիտեի էլեկտրոնային բազայում: Չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիրն է՝ 2023CTYT2Y:

3.Օրինականացման համար սահմանված վճարը շինության համար 1 քմ-ը կազմում է 631 ՀՀ դրամ, ընդհանուր գումարը 110 109.5 ՀՀ դրամ, որը պետք է մուծվի 900 355 120 065 հաշվեհամարին:

4.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարի՝ 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումն համարվում է ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

2023 թ. նոյեմբերի 6 ք.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թվականի N 250 Ա

ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 23-ը հուլիսի 2015 թվականի N828-Ն որոշման դրույթները, Վայոց ձորի մարզպետի 11/08/2023 թվականի N01/06.2/5401-2023 գրությունը և ղեկավարվելով «Հողային օրենսգրքի» 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

Եղեգիս համայնքի Շատին գյուղի վարչական տարածքում գտնվող քաղաքացի Մուրադ Խաչիկի Հակոբյանի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասի (կադաստրային ծածկագիր՝ 10-035-0001-0045 մակերեսը՝ 0,133հա) գործառնական նշանակությունը փոխել հասարակական կառուցապատման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

2023 թ. նոյեմբերի 6 ք.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թվականի N 251 Ա

ՔԱՂԱՔԱՑՈՒ ԿՈՂՄԻՑ ՉԱՓԻՑ ԱՎԵԼԻ ՎՃԱՐՎԱԾ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԸ (ԳԵՐԱՎՃԱՐ) ՀԱՇՎԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2017 թվականի օգոստոսի 3-ի N920-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով, հիմք ընդունելով Տ. Խուդոյանի դիմումը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1.Քաղաքացի Տիգրան Մելիքի Խուդոյանի կողմից Եղեգիս համայնքի բյուջե վճարված 14431 (տասնչորս հազար չորս հարյուր երեսունմեկ) ՀՀ դրամ գումարի չափով գերավճարի հաշվին իրականացնել հաշվանցում:

2.Հանձնարարել Եղեգիսի համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետին՝ ապահովել գումարի հաշվանցումը հարկ վճարողին պատկանող NISSAN ALTIMA 2.5 I մանիշի 37SF552 համարանիշի փոխադրամիջոցի առկա հարկային պարտավորություններից (թողարկման տարեթիվը 2022թ.):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

2023 թ. նոյեմբերի 9 ք.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

10 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թվականի N 252 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՏԵՍՔԵՐՆ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի պահանջներով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 43-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Եղեգիս համայնքի Շատին գյուղի վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերը գրանցել որպես առանձին միավոր համայնքային սեփականություն՝

կադաստրային ծածկագիր 10-035-0270-0001-ից, մակերեսը 150,4179հա, որից 4,7233հա վարելահող և 145,6946հա այլ հողատեսք,
կադաստրային ծածկագիր 10-035-0268-0001-ից, մակերեսը 98,9387հա, որից 5,339հա վարելահող և 93,5997հա այլ հողատեսք,
կադաստրային ծածկագիր 10-035-0265-0001-ից, մակերեսը 89,67219հա, որից 1,45409հա վարելահող և 88,2181հա այլ հողատեսք,
կադաստրային ծածկագիր 10-035-0260-0001-ից, մակերեսը 58,5187հա, որից 0,9614հա վարելահող և 57,5573հա այլ հողատեսք,
կադաստրային ծածկագիր 10-035-0259-0001-ից, մակերեսը 123,24389հա, այլ հողատեսք:

2.Եղեգիս համայնքի Հերմոն գյուղի վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերը գրանցել որպես առանձին միավոր համայնքային սեփականություն՝

կադաստրային ծածկագիր 10-029-0129-0001-ից, մակերեսը 93,7311հա, որից 1,37հա վարելահող, 5,94հա խոտհարք և 8,12հա այլ հողատեսք,
կադաստրային ծածկագիր 10-029-0128-0001-ից, մակերեսը 114,278հա, որից 2,7644հա վարելահող, և 111,5136հա այլ հողատեսք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

2023 թ. նոյեմբերի 10 ք.Եղեգիս